Հովիւների ընդհանուր կրթութիւն.

Церков. Вѣст.-(№ 9) *ասում է, որ նոյն ինքն հովիւների խոստովանութեամբ շատ քիչ է այն ընդհանուր կրթութիւնը, որ նրանք ստանում են սեմինարիաներում. Հոգևոր դպրոցներում պէտք է զօրացնել ընդհանուր կրթութիւնը. Եւ իմաստութեամբ է վարւում հոգևոր վարչութիւնը աշխատելով ընդարձակել իւր դպրոցներում ոչ միայն աստուածաբանական այլ և հանրակրթական ծրագիրը.*

ՌՈՒՍ ՀԵՐՁՈՒԱԾՆԵՐ

Հռովմի ձգտումն ռուսաց հնածէսներին.

Պրաւոսլաւ հոգևոր վարչութեանը մտահոգութիւն է պատճառում Հռովմի ձգտումը գրաւելու ռուս հնածէսներին. Հռովմը որսալով 2—3 հոգևորական հնածէսներ, կարծում է, թէ առատ հունձ կունենայ. Սակայն ըստ ռուս լրագրների, Հռովմի որսած հնածէսները մեծարժէք գիւտ չեն. Դրանք անհաստատ համոզմունքի տէր մարդիկ են, պատրաստ հանգամանքին նայելով փոխելու իրանց համոզմունքը. և դրանցով դատել հնածէսներին՝ սխալ կը լինէր.

Խօսելով դէպի Հռովմ ձգտող հնածէսների գլխաւոր Հ. Վոլոշչուկի մասին Церк. Вѣст.-*ը առնելով* Рус. Слово-*ից ասում է. կան երկու տեսակ կրօնի հետամուտներ. ոմանք իսկապէս անկեղծօրէն կրօնական բաւականութիւն են որոնում կրօնական նոր համայնքների մէջ, և յաճախ հոգեկան հանգիստ չգտնելով մի դաւանութեան մէջ, ուրիշ դաւանութեան են դիմում, որ իրանց հոգեկան հարցասիրութեան պատասխան գտնեն, կայ և մի ուրիշ ամբողջական տիպ, որին պատկանում է Հ. Վոլոշչուկը. Դրանք անապատում թափառողների նման են. որ ոչ թէ ճշմարտութիւն են որոնում, այլ արածելու տեղ, ուր աւելի յարմար պարզէին իրանց վրանները...*

Կանցնի մի ամիս և մեր թափառականը թերևս Հռոմի հասնի. հնածէսների կողմից բանակցութիւններ վարի Հռոմի հետ։ Կը լսուի, որ մի կողմում կարծես ցնծում են, նոր յաղթութիւն. միւս կողմում շփոթութիւն է, բայց՝ ճիշտն ասելով, վատ տեսակի մի տխմար խաղ է — զրպարտութիւն հնածէսների վերայ և Հռոմի մոլորութիւն։

Կարելի է վերաբերուել պրաւոսլաւութեան կամ հնածէսութեամբ հետ ինչպէս հաճոյէ. կարելի է, եթէ հաճոյ է Հռոմի հետ էլ միանալ, ցանկանալ այդ կամ մերժել. բայց մի բան անկասկած է. կրօնական կեանքը չի կարող կրօնական աստանդականութեամբ առաջնորդուել, և պ. Վոլոշչուկովների կողմից նրանց բոլոր յախուռն խաղերը կրօնական գործ չեն, այլ անյաջող կրօնական բաղդախնդրութիւն։

Ռուս աղանդաւորները Ղարսի նահանգում.

«Тифл. Лист-»ը № 58, առնելով «Обзоръ Карсс. области за 1909 годъ» գրում է. «Այդ նահանգի ազգաբնակութեան մասին հետաքրքիր տեղեկութիւններ.

«Կարսի նահանգում Պրաւոսլաւ ռուսները 4647 հոգի են։ Աղանդաւոր ռուսներ 13,518 են երկու սեռի, որոնցից մեծ մասը-9,771 մոլոկաններ։ 1895 թուին, արտագաղթից առաջ դուխոբորների թիւը 3607 էր իսկ այժմ՝ 792։ Այժմ բաւական նշանաւոր թիւ են կազմում պրիդունները, որոնց թիւն է 2,314. բացի սրանից, նահանգում կան 622 սուբոտնիկ և 919 եհովական։

«Обзоръ-ը նկատում է ի միջի այլոց և այն հանգամանքը, որ կան ընտանիքներ, որոնց մէջ կարելի է մի քանի աղանդների հետևողներ տեսնել։ Բացի սրանից, պատահում է, որ ընտանեկան վէճերը կամ տարաձայնութիւնները ընտանիքի կամ հարևանների միջև պատճառ են դառնում կրօնական պառակտումների և ուրիշ աղանդի յարելու։

«Ռուս աղանդաւորների աղօթատները հասարակ տներ են և ամեն մօլական գիւղերում կան. իսկ դուխոբօրները սեպհական աղօթատուն չունեն բնաւին, և աղօթելու համար հերթով իրար մօտ են խմբւում։

«Պրիգուններները» «Աւետեաց երկիրը» գտնելու յուսով նշանաւոր թուով գաղթեցին Ամերիկա. Կալիֆօրնիայի նահանգը, և իբրև հասարակ բանւորներ գործարաններում և նման հաստատութիւնների մէջ տեղաւորուեցին. սակայն այնտեղ ընդ միշտ մնալու ցանկութիւն չունեն, որովհետև «Աւետեաց երկիրը» չգտնելով, յաւիտեան էլ հասարակ բանւոր մնալու ցանկութիւն չունեն։

«Բայի ռուս աղանդաւորներից Կարսի նահանգում հայ աղանդաւորներ էլ կան, որոնք ապրում են Կարակալա գիւղում մօտ 78 տուն կամ 260 հոգի. երկու տեսակ։ Նրանք պաշտօնապէս հայ բողոքականներ են կոչւում, բայց, ինչպէս հաստատում է «Обзоръ»-ը, իսկապէս պատկանում են ռուս մոլոկանութեան զանազան հատուածներին։ Նրանց մէջ կան պրիգուններ, սուբբոտնիկներ և այլն։ Մոլոկան վարդապետութիւնը նրանք ընդունել են Երևանեան նահանգի մոլոկաններից, ուր առաջ նրանք ապրում էին։ Կարսի նահանգի միւս հայերի մէջ Կարակալացիները իրանց վարդապետութեանը հետևողներ չեն գտնում։

—※ ※—

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Երուսաղէմի յոյն պատրիարքարանի նոր խառն ժողովը. Ցայտնի է, որ Երուսաղէմի օրթոդոքս պատրիարքարանի մօտ կազմուել է նոր վարչական գործն-խառն ժողով, որը պէտք է օգնի պատրիարքին և նրա սուրբ Սինոդին՝ Սիօնի եկեղեցու կառավարութեան գործում։

Երուսաղէմի խառն ժողովը արդէն սկսել է իր գործունէութիւնը։ Ժողովի բաղկացութեան մէջ մտել են վեց հոգևոր անձինք Երուսաղէմի պատրիարք Դամիանոսի նա-